Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնարանի «Կենսաբանություն»(4 ժամ), Քիմիա(4 ժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները.

Ուսուցիչը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են ապրիլի 10-ից ապրիլի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 29-ին ժամը 14:00-ին ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ ք. Աբովյան, Ուսանողական թաղամաս 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /0222/ 2-14-67, 099-900-433